ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ
համայնք, Հեռ. 094-17-27-72, hartagyugh.lori@mta.gov.am

N-122

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

29 դեկտեմբեր 2016թ.

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հարթագյուղ համայնքի ավագանու թիվ 27-Ն որոշումը :

Առդիր 24 թերթ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Հարթագյուղ

«21» 12 . 2016 թ.

Ո Ր Ո Շ Ում N°-27-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով Հարթագյուղ համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Հարթագյուղ համայնքի 2017-2021թթ սոցիալ տնտեսական հնգամյա զարգացման ծրագիրը՝համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

1. Հախոյան Վահան՝ _____
2. Մարգսյան Մակար՝ _____
3. Ավետիսյան Գալուստ՝ _____
4. Մարգսյան Սողոմոն՝ _____
5. Մկրտչյան Ազատ՝ _____

Համայնքի ղեկավար՝ _____ Ա.Հարությունյան

Հավելված

ՀՀ Լոռու մզի Հարթագյուղ համայնքի ավագանու

2016 թվականի դեկտեմբերի 21-ի N -27-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ Հարթագյուղ համայնքի ավագանու 2016.12.21 թիվ 27-Ն որոշմամբ

նիստի ամսաթիվը

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 5
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 5
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 6
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 10
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 11
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 11
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 14
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 15
   3.1. Համայնքիզարգացմանտեսլական 15
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 16
4. ՀԶԾ ֆինանսավորում 18
5. ՀԶԾ մոնիթորինգ 19

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Հարթագյուղ համայնքի զարգացման ծրագիրը:Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վելուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատպայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում

բ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Հարթագյուղը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում՝ Փամբակի լեռնաշղթայի հարավարևմտյան ծայրամասի լեռնաշղթայի մեջ խրված սեպաձև մի հովիտում , որը, չգիտես ինչու, չեն կոչել ԾԱՂԿԱՆՑ ՀՈՎԻՏ:

Այստեղից սկիզբ է առնում Փամբակ գետի վտակներից մեկը և, ասես, իր հետ տանում է հովտում երբևէ ապրած մարդկային հոգու լուռ կարոտները: Եվ ալիքների խայտանքը լուսե այս երազների փշրանքն է կարծես:
Գյուղը շրջապատված է բարձր, կանաչազարդ լեռներով, որոնք հովտին մի տեսակ միջնաբերդի տեսք են տալիս:

Հովիտն ու լեռների ստորոտները ամռանը ծփում են բազում ծաղիկների երփներանգ գույներ: Երբեմն գույների երաժշտական գամման մտովի իր հետ տանում է ինձ դեպի հովտի նախապատմական անցյալը և ես, արբեցած ծաղկանց բույրով, շրջում եմ կուսական հովտում, ուր մոգական բույրն է անցյալի, ու դեռ անեղծ հովիտը՝ բազում հրապույրներով, կարոտ մարդու ձեռքի ու մտքի արարաման կրքին նազում է կապույտ մշուշում: Եվ ինձ թվում է, թե ինչ-որ բան այնպես չէ հովտում, ինչ-որ մի կարոտ՝ սիրո, արարման: Լուռ ցանկություն է առաջանում մի տեսակ նախամարդանալու, հովտի պատմության մեջ առաջինը լինելու, ինչ-որ զոհաբերվելու կամ ընծա առնելու պես մի բան:
Ո՛վ գիտի քանի կարոտներ են մարել մեր հովտում ,որքա՞ն մտքեր անարար, կրքեր՝ կամային ու կրակոտ, զուսպ տրվել են մշտահոս գետի կայտառ ջրերին:

Գյուղի տարածքում է գտնվում իր զորությամբ հայտնի Սուրբ Հովհաննես մատուռը: Հարթագյուղի Սուրբ Նարեկ եկեղեցին կառուցվել է 1902թ., որը մինչև 20 –րդ դարի վերջը Արևելյան Հայաստանի միակ Սուրբ Նարեկ եկեղեցին էր: Սուրբ Նարեկը, ցավոք, այսօր կիսախոնարհ վիճակում է և հիմնանորոգման կարիք ունի: Հարթագյուղ – (Ղալթախչի(թուրքերենից թարգմանաբար նշանակում է թամբ -թամբագործ): 1920թ-ին քեմալաբոլշևիկյան դաշինքը ձեռնարկեց թուրքական նոր արշավանք, որի ժամանակ քեմալական Թուրքիայի կողմից օկուպացվեց Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններ՝ Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի գավառը մինչև Լոռու չեզոք գոտին:
1920թ. նոյեմբերի 15–ին օկուպացվեց Հարթագյուղը (Ղալթախչի): Ամբողջ գյուղը թալանվել է, ազգաբնակչությունը ենթարկվել է վայրագ սպանդի: Ավարը այնքան մեծ էր և ոսկին շլացուցիչ ,որ թուրքերը գյուղը կոչեցին Քյուչուկ Իստամբուլ (փոքր Ստամբուլ):
1920 թ, արշավանքի ժամանակ Հարթագյուղի ամբողջ բնակչությունը սպանդի ենթարկվեց՝ առանց սեռի և տարիքային խտրականության:

Հարթագյուղ համայնքը սահմանակից է Լոռու մարզի Խնկոյան ,Լուսաղբյուր,Սարալանջ, Մեծ Պարնի, Ծազկաբեր գյուղերին:Գյուղը հիմանդրվել է 1926թ-ին ներկա տեղում,ծովի մակերևույթից բարձր է 1720մ. վարչական տարածքը կազմում է 2399 հա, կլիման խիստ է,ձմեռը լինում է ցուրտ,գարունը սովորաբար ուշացած է գալիս ,իսկ ամառը զով է հաճախակի քամիներով:Տարեկան տեղումները մասնավորապես ձմռանը շատ են ձնածածկույթից, հաճախակի փակվում են ճանապարհները,ամռանը լինում են կարկտահարություն և սելաֆներ:Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում,լինում են երկրաշարժեր,աղետալի են եղել 1926թ-ի և 1988թ-ի երկրաշարժերը:

Համայնքի բնակչության առկա թիվը՝1402,

այդ թվում՝

0-6 տարեկան – 76

7-17 տարեկան-146

18-63 տարեկան-1087

17-25 տարեկան – 291

64 և ավելի տարեկան- 93

Բնակչությանսոցիալականկազմը՝

այդթվում՝

թոշակառուներ –96

միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 4

հայրենական պատերազմի մասնակիցներ- 2

հաշմանդամներ – 45

աշխատանք ունեցողներ – 85

գործազուրկներ – 587

փախստականներ - 0

ընտանիքների (ծխերի) թիվը-391

2.2. Համայնքիսոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 28592.2 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 4695.1 մլն դրամ(8.35%),

- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ,հազ.
Կոոպերատիվ	1	150.000
Խանութներ	4	30,000
Կտավատի ձեթի արտադրամաս	1	50,000
Լիմոնադի արտադրամաս	1	30,000

- բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	55հա	1.100տ
կաղամբ	3հա	0,7տ
բանջարեղեն	13,7հա	12տ
միս		18տ
բուրդ		0,4տ
ձու		75հազ.հատ
մեղր		1,5տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	553
Այդ թվում կովեր	319
Մանր եղջերավոր անասուններ	215
Այդ թվում մայրեր	215
խոզեր	116
Այդ թվում մայրեր	12
թռչուններ	721
Այդ թվում հավեր	721
մեղվաընտանիքներ	191

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 106 աշակերտ:

Դպրոցն ունի 26 աշխատող,որից 19 ուսուցիչ:

Դպրոցը գազաֆիկացված է,ջեռուցումը կատարվում է գազակաթսաների ընդհանուր համակարգով,ունի մշտական խմելու ջուր,կոյուղի:

Համայնքում բացակայում է մանկապարտեզ ,շենքային պայմանների բացակայության պատճառով:

- Համայնքում գործում է մեկ բուժ-կետ, որն սպասարկում է համայնքի 1402 բնակիչներին:

Բուժ-կետ աշխատում են 1 աշխատող:

Համայնքում գործում է գրադարան /

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 123 ընտանիքներ,

- Հարթագյուղ համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձանները և նրանց նկարները բերված են ստորև՝

  Սուրբ Հովհաննես մոտուռ

  - Սուրբ Նարեկ եկեղեցի,
  - «Սուրբ ճգնավոր»մատուռ
  - Սուրբ Նշան մատուռ
  - Սուրբ Ապրգանց մատուռ
  - Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հուշարձան
  - Երկրաշաժի անմեղ զոհերի հուշարձաններ
  - միջնադարյան գերեզմաններ
  - միջնադարյան խաչքարեր
  - ջրաղացներ,
  - Բագեր սրբատեղին

  Սալիանք

  Սրբի կոնդ

  Ցից Քարեր



Հ.Հ ԼՈՌԻ ՄԱՐԶ • ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ



2.3. *Համայնքում իրականացվող ծրագրերը*

- Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է լուծել հասարակական տրանսպորտի խնդիրը: Նախատեսված են միջհամայնքային համագործակցության նպատակային միջոցառումներ՝ սպորտային մրցումներ և վիկտորինաներ;
- ԾԻԳ-ի աջակցությամբ համայնքում ստեղծվել է կոոպերատիվ, տրամադրվել են գյուղատնտեսական մեխանիզացիաներ,անասունների համար կառուցվել են ջրի խմոցներ և փարախ: Առաջիկա տարիներին ևս նախատեսված է իրականացնել մոնիտորինգներ:

Միջհամայնքային ծրագրով Հարթագյուղ ,Խնկոյան, Լուսաղբյուր,Մեծ Պարնի համայնքների բնակիչների համար հասանելի կդառնա հասարակական տրանսպորտը: Գյուղացիների համար դյուրին կդառնա բուժ-սպասարկման հաստատություններին, սպառման շուկաներին և գլխավոր մայրուղուն հասնելը: Այն կնպաստի գյուղացիների ապրելակերպի բարելավմանը և առողջության պահպանմանը:

ԾԻԳ-ի կողմից ստեղծված կոոպերատիվը կմեծացնի համայնքի բնակիչների համախմբվածությունը և կխթանի գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես նաև կշատանա անասնագլխաքանակը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	28592,2 մլն	28592,2 մլն	28592,2 մլն	28592,2 մլն	28592,2 մլն
Ա	Հարկային եկամուտներ	4.651 մլն	4.689 մլն	7.719 մլն	4.749 մլն	7.779 մլն
1	Հողի հարկ	3.462 մլն	3.462 մլն	3.462 մլն	3.462 մլն	3.462 մլն
2	Գույքահարկ	841.4 հազ	841.4 հազ	841.4 հազ	841.4 հազ	841.4 հազ
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	36 հազ	36 հազ	36 հազ	36 հազ	36 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	355.7 հազ	355.7 հազ	355.7 հազ	355.7 հազ	355.7 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	23897.1 մլն	23997.3 մլն	2400.4 մլն	24100.5 մլն	24200.6 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Հարթագյուղ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 85%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

*տեղական նշանակություն ունեցող ոռոգման ջրի ջրամբարի կառուցում

.ծայրամասային թաղամասերի գազաֆիկացման բացակայությունը

,.խմելու ջրի անորակությունը/մանրէազերծման, ֆիլտրման բացակայությունը/,

.խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

1) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

2) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

3) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքներ իրականացմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղուբացակայությունը,

.միջոցների սղությունը,

4) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

.հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

.կանգառների բացակայությունը

5) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետների պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

6) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ջրագծի քայքայված վիճակը,

.ոռոգման ցանցի բացակայությունը,

.հողաբաժնի պակասը,

.որակյալ սերմի բացակայությունը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

7) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

8) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Հարաթագյուղ համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի հեռավորորությունը մայրաքաղաքից,

.գովազդի բացակայությունը,

.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

9) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

10) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

11) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը,.բուժ-գործիքների պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը:

12) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

13) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

.ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

14) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	*Համայնքի թույլ կողմեր*

.Բանիմաց աշխատուժի առկայություն .Միջնակարգ դպրոցի առկայություն. Բուժ-կետ առկայություն .Բերրի հողերի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն .Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հնություններ .Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն	.Ոռոգման ջրի բացակայություն .Հողաբաժնի քանակի քչություն .Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Ծնելիության նվազում .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ .Թերզբաղվածության բարձր մակարդակ .Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ .Տրանսպորտային ցանցի բացակայություն .Աշխատատեղերի պակաս .Վագոն տնակների,վթարային բնակարանների առկայություն .գյուղ տեխնիկայի պակաս .գյուղատնտեսական ապրանքերի սպառման խնդիր .հակակարկտային կայանների բացակայություն
Հնարավորություններ	*Սպառնալիքներ*
.Ոռոգման ջրի պաշարի առկայություն .Խմելու ջրի պաշարի առկայություն .Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն .Բերրի հողերի առկայություն .Քարի հանքերի առկայություն .Տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրեր	.Տարերային աղետների վտանգ .Գյուղ. մթերքների գների նվազում .Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն .Սպառման շուկաների դժվար հասանելիություն .Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն .Խիստ կլիմա /ցրտահարություն/,/կարկտահարությաուն / .Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա կլինեն ձեռնարկություններ, և մարդիկ կապրեն արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքի բնակչների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 20%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 25%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 2%-ով աճի:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2) Համայնքի գույքը կառավարել:
3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,

1) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
2) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
3) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
4) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
5) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
6) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Հարթագյուղ համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:
7) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
8) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
9) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
10) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
11) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
12) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

13) 1, <u>ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ</u> .

<u>22.ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ</u>

<u>23. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - իրականացվում է է համայնքի բյուջեի միջոցներով:</u>

<u>24. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ</u>

1. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

2. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ1

Աղբահանություն

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Պահպանել փողոցների հակասանիտարական վիճակը						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքում մաքուր և բարեկարգ փողոցներ ունենալ,ավելացնել աղբահորերը						
	Ցուցանիշներ $Մ^3$	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			360	360	360	360	
Ծրագրիմիջանկյալ արդյունքներ	• Աղբարկղերի ձեռք բերում և աղբի տեղափոխում						
	Ցուցանիշներ Աղբարկղեր/հատ/	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			20	20	20	20	20
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Աղբարկղերի պատվիրում 1.2. Մեխանիզացիա աղբը տեղափոխելու համար						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝120000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 600000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 780000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Հարթագյուղ համայնքի բոլոր բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրիհամառոտ նկարագրություն	Այժմ համայնքը գտնվում է հակասանիտարական վիճակում, և ծրագրի իրականացումից հետո համայնքը կունենա մաքուր և բարեկարգ փողոցներ:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Հնարավոր դարձնել վարելահողերի ոռոգումը և ստանալ բարձր բերք						
Ծրագրի անմիջական նպատակ	150 հա վարելահողերի ոռոգում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		40 մլն		-	-	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ոռոգման ջրամբարի կառուցում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		40 մլն					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Հետազոտել տեղանքը ,պատվիրել նախագիծ,նախահաշիվ 1.2.Անցկացնել մրցույթ ,կառուցել ջրամբար 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 վարձակալել անհրաժեշտ տախնիկա 2.2 Անհրաժեշտ շինանյութի ձեք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 40 մլն դրամ՝						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Գումարի բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներկայումս համայնքում ոռոգվում է 50 հա հողատարածք,իսկ ջրամբարի կառուցման դեպքում այն կհասնի ավելի քան 150 հա –ի:Համայնքը ունի բարձր բերքատվության վարելահողեր,ջրամբարի կառուցման դեպքում կխթանի գյուղատնտեսությանը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

(Ծրագրիանվանում)

արտադիր խնդիր, որի ուծմանն է միտված րագիրը	Հարթագյուղ համայնքային ճանապարհների բարեկարգում						
ծրագրի անմիջական պատակ	Ունենալ բարեկարգ ճանապարհներ և վերանորոգված ջրհեռացման առուներ						
	Ցուցանիշներ ճանապարհի բարեկարգում `քառ.մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			3400	3400	3400	3400	3400
ծրագրի միջանկյալ արդյունքներ	• Վերանորոգված ջրհեռացման առուններ ունենալ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Վերանորոգված ջրահեռացման առուների գմ	0	1600	300	0	0	0
	• Բարեկարգ ճանապարհ ունենալ						
	Ցուցանիշներ Ճանապարհների շեբենապատում քառ.մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3400	3400	3400	3400	3400
ծրագրի հիմնական ործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Չափագրում 1.2. Նախագծի պատվիրում 1.3.Ֆինանսական միջոցների հայթայթում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ձեռք բերել անհրաժեշտ նյութեր`տեղական գրունտից 2.2. Ճանապարհների շեբենապատում						
ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0,8մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 11մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 11,8մլն դրամ՝						
ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
ծրագրի հիմնական իսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
ծրագրի հիմնական ահառուները	Հարթագյուղ համայնքի բոլոր բնակիչները:						
ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
ծրագրի համառոտ կարագրություն	Համայնքում ներկայումս ճանապարհների վիճակը վատ է և ծրագրի իրականացումը կապահովի համայնքաբնակներին ունենալ բարեկարգ ճանապարհներ:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ -4

« ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Զբոսաշրջության խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ՝	Համայնքի զբոսարջային գրավչության մեծացում և ներգնա զբոսաշրջության աճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ	0	5	15	30	40	50
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում զբոսաշրջության և բիզնեսի բնագավառում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Զբոսաշրջության բնագավառում շահագրգիռ բնակիչների աճ	0	10	20	40	50	60
	2. Ձեռագործ աշխատանքների վաճառքի համար բնակիչների գիտելիքների ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ձեռագործ աշխատանք կատարող տնտեսությունների քանակի ավելացում	0	5	10	15	20	25
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Զբոսաշրջային բիզնեսով հետաքրքրվող բնակիչների համար դասընթացների կազմակերպում: 1.2.Համայնքի գեղատեսիլ վայրերի մասին իրազեկման գովազդների իրականացում: 1.3 Մատուռի մոտակա տարածքում հանգստի գոտիների և առևտրի կրպակների կառուցում: 1.4 Տնային տնտեսություններին կից հյուրանոցային պայմանների բարելավում 1,5 Հանգստյան գոտիների համար հողի օտարում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ձեռագործ ապրանքների վաճառքի համար տոնավաճառների կազմակերպում 2.2.Տոնավաճառների անցկացման համար տեղերի հատկացում և թույլտվությունների տրամադրում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 10 մլնդրամ Կապիտալ ծախսեր՝ 90մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝100մլն.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Համայնքում գեղատեսիլ վայրերի առկայություն 2. Սուրբ Հովհաննես մատուռի և այլ պատմամշակույթային վայրերի առկայություն 3.Անհատ ձեռնարկատերերի շահագրգռվածություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	1.Սորբ Հովհաննես մատուռի ճանապարհի բարեկարգում 2.Ֆինանսական միջոցների հայթայթումը						

Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հարթագյուղ համայնքը ունի գեղատեսիլ վայրեր,մասնավորապես գյուղի սկզբնամասում է գտնվում սորբ Նարեկ եղեցին եկեղեցին կառուցվել է 1902թ., որը մինչև 20 –րդ դարի վերջը Արևելյան Հայաստանի միակ Սուրբ Նարեկ եկեղեցին էր: Սուրբ Նարեկը, ցավոք, այսօր կիսախոնարհ վիճակում է և հիմնանորոգման կարիք ունի:Ալնկալիքներ կան որ զբոսաշրջության ծրագրի խթանման դեպքում ,կհատկացվի ֆինանսավորում ,որպոսզի վերակառուցվի եկեղցին: